ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 73

ԲԱԼԱՍՈՆ ՔՈՒՓԵԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջների՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել Բալասոն Գառնիկի Քուփելյանին իրեն սեփականության իրավունքով պատկանող 0.0515 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի (սեփականության վկայական N 19072018-07-0009, ծածկագիր 07-054-0123-0002) վրա կատարել հողային, մասնավորապես հողահարթեցման և քարահավաքման աշխատանքներ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2018 թ. հոկտեմբերի 16
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 74

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆՈՐՄԱՏԻՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի պահանջների՝ ***որոշում եմ.***

1. Պտղնի համայնքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N 30-Ն և 31-Ն որոշումները պաշտոնական հրապարակել 2018 թվականի հոկտեմբերի 17-ին:
2. Պաշտոնական հրապարակումն իրականացնել համայնքի տարբեր հատվածներում ցուցատախտակներին փակցնելու միջոցով:
3. Պաշտոնական հրապարակման պատասխանատվությունը դնել աշխատակազմի քարտուղարի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2018 թ. հոկտեմբերի 16
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 75

ԼՅՈՒԴՎԻԳ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ՊԱՏՈՒՀԱՆԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 66 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Լյուդվիգ Տիգրանի Խաչատրյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգետարածք 12-րդ թաղամաս թիվ 18 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (սեփականության վկայական N 1077314, ծածկագիր 07-054-0136-0037) 2002-2005 թվականներին ինքնակամ կառուցված շինությունները և ինքնակամ բացված պատուհանը: Համայնքի էլեկտրոնային քարտեզից, որակավորված անձի կողմից գծված հողամասի և շինությունների հատակագծերից և տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Լյուդվիգ Տիգրանի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգետարածք 12-րդ թաղամաս թիվ 18 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 2002-2005 թվականներին ինքնակամ կառուցվել է 127.97 քմ մակերեսով այգետնակ և 2.79 քմ մակերեսով պարիսպ, ինչպես նաև առկա է ինքնակամ բացված մեկ պատուհան:

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1; 9; 10; 11; 13 և 18-րդ կետի «դ» ենթակետի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված հողամասի և շինությունների հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ բացված պատուհանի և ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,

կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Լյուդվիգ Տիգրանի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգետարածք 12-րդ թաղամաս թիվ 18 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության հողամասում՝ ԱՁ Սամվել Առաքելի Ավետիսյանի կողմից 09.10.2018 թվականին տրված հատակագծերի համաձայն (կցվում են) ինքնակամ կառուցված 127.97 քմ մակերեսով այգետնակը և 2.79 քմ մակերեսով պարիսպը, ինքնակամ բացված պատուհանը համարել օրինական:

2. Պարտավորեցնել Լյուդվիգ Տիգրանի Խաչատրյանին ինքնակամ կառուցված շինությունների և ինքնակամ բացված պատուհանի օրինականացման համար համայնքային բյուջե 900105225214 հաշվեհամարին վճարել համապատասխանաբար 332730 (երեք հարյուր երեսուներկու հազար յոթ հարյուր երեսուն) ՀՀ դրամ, 4360 (չորս հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամ և 2600 (երկու հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. ՈՒԺը կորցրած ճանաչել Պտղնի համայնքի ղեկավարի 2018 թվականի սեպտեմբերի 14-ի «Լյուդվիգ Խաչատրյանի կողմից ինքնակամ կառուցված շինությունների և ինքնակամ բացված պատուհանի օրինականացման մասին» N 66 որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2018 թ. հոկտեմբերի 16
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 76

ԱՆԱՀԻՏ ԽԼՂԱԹՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով Անահիտ Վոլոդյայի Խլղաթյանի դիմումը և լիցենզավորված ճարտարապետի կողմից գծված նախագծի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1. Անահիտ Վոլոդյայի Խլղաթյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի այգեգործական տարածք 14-րդ տեղամաս թիվ 16 հասցեում գտնվող 0.05 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (սեփականության վկայական N 07042018-07-0013, ծածկագիր 07-054-0217-0016) այգետնակի կառուցման աշխատանքների շինարարության թույլտվություն:
2. Հանձնարարել Անահիտ Վոլոդյայի Խլղաթյանին շինարարական աշխատանքներն իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:
3. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
4. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ եռօրյա ժամկետում համայնքապետարան ներկայացնել տեղեկանք Ձև N 5-ը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2018 թ. հոկտեմբերի 17
գ.Պտղնի